

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ


Աղքատության գնահատման մեթոդաբանությունը 2009թ.-ից ի վեր

Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ագրեգացված ցուցանիշը: Միջազգային փորձից ելնելով՝ ընդունված է, որ սպառումը ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը, հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում: Սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի-կենսապայմանների ամբողջացված հետազոտությամբ ստացված տվյալների հիման վրա և ներառում է հետևյալ բաղկացուցիչները. (ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից ստացված օգնությունը և այլ աղբյուրներից ստացված օգնությունը և (բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը: Հայաստանում աղքատության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է աղքատության բացարձակ գիծը:

Աղքատության գնահատումը ենթադրում է երեք բաղադրիչներ /տես Գծապատկեր 1

- Բարեկեցության կամ կյանքի պայմանների բաշխվածություն,
- Աղքատության գիծ, որից ներքև գտնվող անհատները համարվում են «աղքատ»
- Աղքատության չափման միավոր:

Գծապատկեր 1. Աղքատության գնահատման բաղադրիչները



Սույն բաժնում նկարագրվել է աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը, որը կիրառվել է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցում, որի հիմքում ընկած են 2009թ.-ի ՏՏԿԱՀ տվյալները: Այլ կերպ ասած, այս բաժնում նկարագրվել են աղքատության գնահատման բոլոր երեք բաղադրիչները.

- Տնային տնտեսությունների հիմնական ցուցանիշի՝ բարեկեցության գնահատում
- Աղքատության գծի կառուցում
- Աղքատության ցուցիչների հաշվարկ:

1. Բարեկեցության գնահատումը, սպառման ագրեգատի կառուցումը

2004-2008թթ.-ին Հայաստանում աղքատության գնահատումը հիմնվել է 2004 թվականի ՏՏԿԱՀ տվյալների հիման վրա կառուցված մեթոդաբանության վրա: Այդ ընթացքում Հայաստանում արձանագրվել է շոշափելի տնտեսական աճ և տնային տնտեսությունները ենթարկվել են լուրջ սոցիալ-տնտեսական փոխակերպման:

Անկախությունն ձեռք բերելուց ի վեր ՀՀ կառավարությունը կարևոր բարեփոխումներ է իրականացրել՝ ներառյալ պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների, առևտրային կառույցների ու բնակֆոնդի լայնածավալ մասնավորեցումը՝ ապահովելով բնակելի ու այլ տարածքների փոփոխությունները: Փոփոխության է ենթարկվել նաև բնակչության թվաքանակը, կառուցվածքն ու աշխարհագրական բաշխվածությունը, որը մասամբ միգրացիայի, մասամբ էլ սոցիալ-ժողովրդագրական ու տնտեսական գործունեության արդյունքն է: Ավելին, տնային տնտեսությունների կյանքի պայմանները, աղքատության մակարդակը և բնույթը, աշխարհագրական ու տնտեսական բևեռացումը, կյանքի ընդհանրական պայմանները վերջին տարիների ընթացքում փոփոխվել են, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել վերանայելու աղքատության գնահատման հիմնական տվյալները՝ արտացոլելու համար բնակչության սպառման ու ծախսերի օրինաչափություններում տեղ գտած փոփոխությունները: Այնուամենայնիվ, հարկ է ուշադրություն դարձնել, որ 2009թ.-ից սկսած սպառման ագրեգատի հաշվարկի նոր մեթոդաբանությունը սկզբունքային նմանություն ունի 2004 թվականի տարբերակի հետ: 2004 թվականի մեթոդաբանության մանրամասները կարելի է գտնել ՀՀ ԱՎԾ կողմից 2006թ. հրապարակված «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցում՝ հիմնված 2004թ. ՏՏԿԱՀ տվյալների վրա:

Այս բաժնում համառոտ ներկայացված է սպառման ագրեգատի ձևավորման ալգորիթմը, ինչպես նաև մատնանշված է 2004 և 2009թթ.-ին կիրառված մեթոդաբանությունների հիմնական տարբերությունները:

(I) Պարենային ապրանքների սպառում

Պարենային ապրանքների սպառումը ներառում է տանը և տանից դուրս (այսինքն՝ ռեստորաններում և այլն) սպառված սննդամթերքը, ինչպես նաև բնամթերային տեսքով ստացված սննդամթերքի՝ սեփական արտադրության սննդի, որպես նվեր և օգնություն ստացված սննդի, և մարդասիրական օգնության տեսքով ստացված սննդի սպառումը:

(II) Ոչ պարենային ապրանքների սպառումը

Ոչ պարենային ապրանքների սպառումը ներառում է հետևյալ խմբերը՝ ռգելից խմիչքներ և ծխախոտ, հագուստ և կոշիկեր, կենցաղային իրեր, տրանսպորտային ծախսեր, կոմունալ ծառայություններ, հանգստի, կրթության, առողջապահության հետ կապված ծախսեր և երկարաժամկետ գործածության ապրանքների հաշվարկային արժեքը: Այն նաև ներառում է բնամթերային տեսքով ոչ պարենային ապրանքների սպառումը, ինչպես օրինակ՝ անվճար ստացված ոչ պարենային ապրանքներն ու ծառայությունները (այսինքն՝ մարդասիրական օգնությամբ բնամթերային տեսքով ստացված ոչ պարենային ապրանքները, նվերները, տնային տնտեսության անդամների կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքներն ու ծառայությունները): Բնամթերային տեսքով ոչ պարենային այդ ապրանքների արժեքի գնահատումն իրականացնում են տնային տնտեսությունները: Օգտագործելով ամսական կտրվածքով կատարված ծախսերի տվյալները, գնահատվում են ոչ պարենային ապրանքների համար կատարված ծախսերի դրամական արժեքները: Այս խմբերի համար գնային համապատասխանեցումները հիմնված են եղել տվյալ եռամսյակի պաշտոնական ՄԳԻ-ի վրա:

Երկարաժամկետ օգտագործման ապրանքների արժեքի գնահատումն, այսինքն՝ տնային տնտեսության տնօրինման տակ գտնվող երկարաժամկետ գործածության ապրանքների սպառման արժեքը, ներառվել է սպառման ագրեգատի մեջ: Բնակելի տարածքի պայմանական հաշվարկային արժեքը, այդ բնակարանում ապրողի/սեփականատիրոջ օգուտն այդ բնակարանից՝ որպես սպառման բաղադրիչ, չի գնահատվել,

քանի որ Հայաստանում բնակելի տարածքների հետ առնչվող գործառնությունների վերաբերյալ տվյալները սակավ են:

Տարածաշրջանային ու սեզոնային գների տարբերությունների ճշգրտում

Անվանական սպառման ագրեգատը ճշգրտվում է տարածաշրջանային գների երկչափանի ինդեքսի միջոցով: Պարենային ապրանքների սպառման գների ճշգրտման համար դիտարկվող գործոնները հաշվի են առնում եռամսյակային և քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև գների տարբերությունները: Ամբողջ սպառման ագրեգատն այնուհետև ներկայացվում է միջին տարեկան ազգային գներով:

(III) Մեկ չափահաս անձին համարժեք սպառման գնահատումը

Մեկ չափահաս անձին համարժեք սպառումը հաշվարկվում է տնային տնտեսության ընդհանուր սպառումը բաժանելով տնային տնտեսությունում **չափահաս անձին** համարժեք անդամների թվաքանակի վրա (EA): **Չափահաս անձին** համարժեք անդամները գնահատվում են օգտագործելով վերոնշյալ համարժեքության սանդղակը և մասշտաբից տնտեսումն՝ ըստ հետևյալ բանաձևի, i -րդ տնային տնտեսության համար

$$EA_i = (A_i + a C_i)^\theta$$

որտեղ A_i -ին տնային տնտեսության չափահաս անդամների թվաքանակն է, C_i -ն երեխաների թվաքանակն է, θ -ն մասշտաբի պարամետրն է ($\theta=0.87$) և a -ն չափահաս անդամի նկատմամբ երեխայի ծախսն է ($a=0.65$): Երեխա են դիտարկվում մինչև 14 տարեկան անհատները:

ի՞նչով են տարբերվում 2004 և 2009թթ.-ի մեթոդաբանությունները

- 2009 թվականի սպառման ագրեգատն առավել ճշգրիտ է՝ Այն ներառում է սննդամթերքի բոլոր տեսակների, այդ թվում նաև քիչ քանակությամբ սպառվածների արժեքը, որոնք ներառված են օրագրում, ինչպես օրինակ՝ աղը, պղպեղը և այլն:
- Մեկ չափահաս անձին համարժեք սպառման գնահատումը հաշվի է առնում տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի ներկա օրերի ճշգրիտ քանակը հետազոտության անցկացման ամսվա ընթացքում:
- Երկարաժամկետ օգտագործման ապրանքների սպառման արժեքը գնահատվում է մի փոքր այլ կերպ և պարզեցված է, հաշվի առնելով այն, որ 2009 թվականի հետազոտության մեջ բացակայում է տնային տնտեսությունների տնօրինման ներքո գտնվող երկարաժամկետ օգտագործման ապրանքների տարիքը: Ամսական սպառման արժեքը գնահատվում է նոր ապրանքի գինը բաժանելով տվյալ ապրանքի ծառայելու ակնկալվող առավելագույն տարիների (արտահայտած ամիսներով) տևողության վրա: Երկարաժամկետ օգտագործման ապրանքների ծառայելու առավելագույն տևողությունը տատանվում է՝ անհատական համակարգիչների համար 5 տարուց մինչև ավտոմեքենաներինը՝ 20 տարի:
- Մինչ 2004 թվականը, սպառման ագրեգատի բաղադրիչները ճշգրտվում էին կամ դեֆլյացիայի էին ենթարկվում առանձին-առանձին: 2009 թվականին տնային տնտեսության անվանական սպառումը ճշգրտվել է՝ ըստ եռամսյակների և քաղաք ու գյուղ համադրված գնային դեֆլյատորի: 2009 թվականին նախ և առաջ հաշվարկվեց անվանական համախառն սպառումը, ապա այն յուրաքանչյուր եռամսյակի համար և գյուղական ու քաղաքային բնակավայրերի հաշվարկով ճշգրտվեց երկչափ(եռամսյակ, քաղաք/գյուղ) գնային դեֆլյատորով: Գնային դեֆլյատորը հաշվարկվեց՝ հենվելով

մասամբ տնային տնտեսությունների հետազոտության արդյունքում ստացված գնային տվյալների և մասամբ՝ պաշտոնական ՄԳԻ-ի տվյալների վրա: Պարենային զամբյուղի արժեքի տարբերություններն ըստ եռամսյակների, գյուղ/քաղաքի հաշվարկվել է հիմնվելով հետազոտությամբ ստացված սննդամթերքի սպառման տվյալների վրա: Պարենային դեֆյատորը, որոշակի եռամսյակում և տարածքում պարենային զամբյուղի միջին արժեքի հարաբերակցությունն է 2009 թվականի ազգային միջինացված գներով արտահայտված միևնույն զամբյուղի արժեքին: Ոչ պարենային գնային դեֆյատորները վերցվել են պաշտոնական ՄԳԻ-ից: Համախառն գնային դեֆյատորի հաշվարկն իրականացվել է որպես երկու՝ պարենային և ոչ պարենային դեֆյատորների կշռված միջին, որտեղ կշիռները նույնական են աղքատության գծի պարենային և ոչ պարենային բաղադրիչների կշիռների հետ: Մեկ համախառն դեֆյատորի գործածությունը թույլ է տալիս այն կիրառել ոչ միայն սպառման ագրեգատի, այլ նաև բարեկեցության այլ ցուցանիշների հաշվարկի դեպքում, ինչպիսին եկամուտն է:

- Աղքատության նոր գիծը գնահատվել է 2009 թվականի ՏՏԿԱՀ-ի տվյալների հիման վրա: Գնահատման մանրամասները նկարագրված են ստորև:

2. Աղքատության գիծ

Աղքատության արդիական գծի առկայությունը, որը համադրելի է երկրի սոցիալտնտեսական ներկա իրողությունների հետ, շատ կարևոր մի տարր է, որը ՀՀ կառավարությանը հնարավորություն է ընձեռում աղքատության դեմ քաղաքականություն իրականացնելու: Վերանայված ազգային աղքատության գիծը կարող է կիրառվել սոցիալական աջակցության ծրագրերի աղքատության վրա ունեցած ազդեցությունը գնահատելու համար: Օրինակ՝ այն հաշվի է առնում ապրանքների ու ծառայությունների գների տատանումների ազդեցությունը բնակչության կյանքի որակի վրա:

Այս գլխի նպատակն է նկարագրել 2009 թվականի ՏՏԿԱՀ-ի տվյալների հիման վրա աղքատության ազգային նոր գծի հաշվարկման մեթոդաբանությունը: Աղքատության գիծը սահմանվում է որպես նվազագույն սպառողական զամբյուղի դրամական արժեք, որը հասարակությունում ձևավորված (փաստացի դրսևորված) կյանքի նվազագույն մակարդակ ապահովող ապրանքների ու ծառայությունների համադրությունն է: Զամբյուղի կազմն ու կառուցվածքը հիմնված է բնակչության կողմից փաստացի ձևավորված սպառման վրա՝ ստացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքում, որի արժեքի տատանումներն արտահայտվում են սպառողական գների փոփոխություններով:

Նվազագույն սպառողական զամբյուղը բաղկացած է երկու մասից՝ նվազագույն պարենային զամբյուղ, որը համապատասխանում է հիմնական սննդամթերքի գումարային համարժեքին և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արժեք: Հետևաբար, աղքատության գիծը ներառում է երկու բաղադրիչներ՝

- Աղքատության պարենային գիծ /նվազագույն պարենային զամբյուղի արժեք/,
- Ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արժեք:

Նախորդ աղքատության գիծը ներդրվել էր 2004 թվականին՝ ՀՀ ԱՎԾ-ի կողմից Համաշխարհային բանկի (ՀԲ) տեխնիկական աջակցությամբ: 2004 թվականից ի վեր այն հաջողությամբ գործածվել է ՀՀ ԱՎԾ-ի կողմից Հայաստանի աղքատության պաշտոնական վիճակագրության հաշվարկման ու հրապարակման նպատակով:

Նորացված աղքատության գիծը հնարավորություն կընձեռի ստանալ Հայաստանի բնակչության կենսամակարդակի ու աղքատության վերաբերյալ ավելի վստահելի տվյալներ:

Աղքատության պարենային գծի գնահատումը

Աղքատության պարենային գիծը գնահատելու համար կիրառվել է ՀԲ մեթոդաբանությունը, որը հիմնված է <<Հիմնական պահանջների արժեք>> մոտեցման վրա: Աղքատության պարենային գծի, որպես նվազագույն պարենային զամբյուղի արժեքի գնահատման մեթոդաբանություն, բաղկացած է մի քանի քայլից: Ստորև տրված է այդ քայլերի համառոտ սկզբունքային նկարագրությունը, որն ուղղված է աղքատության պարենային գծի մշակմանը:

Մանրակարգի նվազագույն անհրաժեշտ կալորիականությունը

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպության (ՊԳԿ) հետ համագործակցելով՝ շարունակաբար վերանայում է մարդու կողմից սպառվող սննդանյութերի նկատմամբ պահանջի և երաշխավորվող սննդանյութերի օգտագործման վերաբերյալ միջազգային նոր հետազոտություններն ու տեղեկատվությունը: Հաշվի առնելով հիմնական սննդանյութերի բազմաքանակ լինելու փաստը, սա լայնածավալ և երբեք չավարտվող առաջադրանք է: Այդ սննդանյութերն են՝ սպիտակուցները, ածխաջրերը, ճարպերն ու լիպիդները, վիտամինների շարքը, բազմաթիվ հանքային նյութերն ու չնչին քանակությամբ էլեմենտները:

Որոշակի սեռատարիքային խմբի համար մեկ անձին բաժին ընկնող սննդային էներգետիկ արժեքը համարվում է համարժեք, եթե առողջ կյանքի և ֆիզիկական թեթև գործունեության պահպանման կարիքներն ապահովված են: Ամբողջ բնակչության նվազագույն էներգետիկ պահանջը բնակչության տարբեր սեռատարիքային խմբերի նվազագույն էներգետիկ պահանջի կշռված միջինն է:

Շատ երկրներ հենվում են ԱՀԿ-ին և ՊԳԿ-ին, այս տեղեկատվությունը սահմանելու և տարածելու գործում, որն իրենք սահմանում են որպես ազգային սննդակարգի չափաբաժին: Այլոք այն օգտագործում են որպես իրենց չափորոշիչների հիմք: Մարդու սննդանյութերի պահանջների սահմանումը բոլոր երկրներից պահանջում է ընդհանրական հենք, որը հնարավոր կդարձնի մշակել բնակչության սննդակարգի վերաբերյալ ուղեցույցեր:

Հայաստանի համար անհրաժեշտ միջին կալորիականությունը հաշվարկվել է 2004 թվականին ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ ՀԲ աջակցությամբ, օգտագործելով տարբեր ժողովրդագրական խմբերի համար Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից անհրաժեշտ կալորիականության համար սահմանված չափորոշիչները (1985) և այդ ժողովրդագրական խմբերի բնակչության համամասնության մասին տեղեկատվությունը: Այսպիսով, Հայաստանի համար օրական մեկ շնչի հաշվով անհրաժեշտ միջին կալորիականությունը գնահատվեց 2 232 կկալ:

Նույն անհրաժեշտ կալորիականությունն է օգտագործվել նորացված աղքատության պարենային գծի հաշվարկման վերլուծության համար, քանի որ բազիսային (հենքային) բնակչության կառուցվածքում արմատական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Քանի որ աղքատության պարենային գծի արժեքը գծային կախվածություն ունի անհրաժեշտ կալորիականության արժեքից, ապա աղքատության պարենային գծի արժեքները՝ այս զեկույցում բերվածից տարբերվող ցանկացած այլ կալորիական պահանջի դեպքում, կարող են հաշվարկվել՝ օգտագործելով համապատասխան սանդղակային գործակիցներ:

Նվազագույն սպառողական զամբյուղի բազիսային (հենքային) բնակչությունը

Նվազագույն պարենային զամբյուղի բազիսային բնակչության ընտրությունն ուղղորդվել է աղքատության գծին մոտ գտնվող տնային տնտեսությունների բնակչության համարժեք ներկայացմամբ՝ այսպիսով արտացոլելով այդ գծի մոտ գտնվող բնակչության սննդի սպառումը (արտացոլելով պարենային մի նվազագույն զամբյուղ, որը շատ «աղքատ» կամ շատ «հարուստ» չէ): Այս խմբի պարենային զամբյուղը նպատակ ունի հաշվառելու

համապատասխան, համեմատաբար աղքատ բնակչության սննդի սպառման օրինաչափությունները: Բազիսային բնակչության ընտրությունը նորմատիվ դատողություն է ուղղված աղքատության գծի ձևավորմանը: Լավագույն դեպքում բազիսային բնակչությունը պետք է ընտրվի այնպես, որ համադրելի լինի աղքատության գնահատականների հետ, որոնք հիմնվում են այդ խմբի վարքագծի չափանիշներին: Տեսականորեն, նախ և առաջ անհրաժեշտ է մոտարկել, թե ովքեր են աղքատները՝ բազիսային խումբը սահմանելու և աղքատության գիծը հաշվարկելու նպատակով: Որոշ դեպքերում հարկ է լինում բազիսային խմբի վերանայմամբ վերահաշվարկել մինչև արդյունքների համադրելի դառնալը:

Մեթոդաբանության մշակման ընթացքում որոշվեց նվազագույն պարենային զամբյուղի համար որպես բազիսային բնակչություն դիտարկել չափահաս-համարժեքի երկրորդ, երրորդ և չորրորդ սպառողական դեցիլները: Ավելին, կիրառվեց զգայունության վերլուծություն, որպեսզի ստուգվի բազիսային բնակչության ընտրությունից կախված նվազագույն պարենային զամբյուղի կայունությունը:

Աղյուսակ 1-ը ներկայացնում է բնակչության բաշխվածության տարբեր հատվածների սննդամթերքի սպառման կառուցվածքի վերլուծությունը:

Աղյուսակ 1. Հիմնական սննդամթերքի սպառման կառուցվածքն ըստ սպառման ագրեգատի դեցիլային խմբերի

(տոկոսներով)

Սննդամթերք	Ամբողջ բնակչությունը	Դեցիլային խմբեր				
		1-2	2-4	4-6	1-5	6-10
Հաց ու հացահատիկ	28.7	33.3	33.6	31.8	33.3	25.5
Միս	16.1	9.2	11.4	13.6	11.4	19.3
Ձուկ	1.1	0.5	0.7	1.0	0.7	1.4
Կաթ, պանիր և ձու	14.3	19.0	16.6	14.2	16.5	12.8
Բուսական յուղեր և ճարպեր	7.2	8.2	7.6	7.2	7.6	6.9
Միրգ	8.1	3.7	5.2	7.3	5.3	10.0
Բանջարեղեն	15.3	17.9	16.5	15.9	16.7	14.3
Շաքար, ջեմ, մեղր, շոկոլադ, հրուշակեղեն	4.6	3.5	3.8	4.3	3.8	5.2
Այլ սննդամթերք	1.0	1.1	1.1	1.1	1.1	1.0
Սուրճ, թեյ և կակաո	3.0	3.3	3.1	3.1	3.2	2.8
Ոչ ալկոհոլային խմիչքներ	0.7	0.3	0.4	0.5	0.4	0.9
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղքատության պարենային գիծը, որպես նվազագույն պարենային զամբյուղի արժեք, սահմանվեց բազիսային բնակչության փաստացի սպառողական օրինաչափությունների համաձայն, դա նշանակում է, որ նվազագույն սպառողական զամբյուղի բաղադրությունը բազիսային բնակչության պարենային սպառման կառուցվածքի հետ նույնատեսակ է: Բայց սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի քանակներն այնպես են համապատասխանեցված, որ օրական մեկ շնչի հաշվով կալորիականության արժեքը կազմում է 2 232 կիլոկալորիա:

Նվազագույն պարենային զամբյուղի արժեքը

Հիմնվելով ընտրված հիմնական բնակչության սպառման մասնաբաժնի վրա, օրական 2 232 կալորիան այնուհետև բաշխվել է սննդամթերքի «առավել կարևոր» տեսակների միջև: Այս նվազագույն կալորիականությամբ սննդակարգը հաջորդիվ գնահատվել է 2009 թվականի ազգային տարեկան միջին գներով՝ օգտագործելով սննդամթերքի յուրաքանչյուր տեսակի կալորիայի արժեքը (Pf/cf): Նվազագույն պարենային զամբյուղի դրամական արժեքը, որը

հենց պարենային աղքատության գիծն է, հաշվարկվում է որպես այս սննդակարգի ընդհանուր արժեք արտահայտված՝

$$FPL = \sum_f \frac{P^f}{c^f} S^f(N)$$

Որտեղ յուրաքանչյուր f սննդատեսակի համար c^f կալորիական արժեքն է, իսկ S^f մասնաբաժինը ընդհանուր կալորիական արժեքի մեջ N զամբյուղի սննդատեսակների քանակն է:

Նվազագույն պարենային զամբյուղում սննդամթերքի ու ոչ ալկոհոլային խմիչքների տեսակները

Հաճախ նվազագույն պարենային զամբյուղում տեղ գտած սննդամթերքի տեսականու վերաբերյալ սխալ մեկնաբանություններ են լինում, կարծելով, որ զամբյուղում որքան շատ լինի սննդամթերքի տեսականին, այնքան ավելի լավն ու հարուստ է այն: Դա ոչ միշտ է այդպես: Բանն այն է, որ սննդամթերքի նոր տեսակների ավելացումը հնարավոր է միայն սննդամթերքի մյուս տեսակների քանակների կրճատման հաշվին, քանի որ հարկ է նշել, որ կալորիականության արժեքը սահմանվել է 2 232 կիլոկալորիա, ուստի սննդամթերքի ցանկացած նոր տեսակի ընդգրկումը կարող է իրականացվել այլ տեսակի կամ տեսակների դուրս մղման հաշվին՝ անփոփոխ պահելով կալորիականության արժեքը:

Շատ կարևոր է հասկանալ, որ սննդամթերքի ավելի քիչ տեսականիով զամբյուղը ոչ միշտ է ենթադրում, որ «վատն» է:

Ընդհանրապես, նվազագույն պարենային զամբյուղում ներառված սննդամթերքի ցանկն ու քանակն ավելի քիչ են կախված առնվազն հետևյալ գործոններից՝

- Ի՞նչ կարևորություն ունեն սննդամթերքի այդ տեսակները–ինչպիսի՞ն է բնակչության եկամուտներում սննդամթերքի այդ տեսակներին հատկացված գումարի մասնաբաժինը,
- Արդյո՞ք սննդամթերքի այդ տեսակների գները հասանելի են, հեշտ մշտադիտարկելի ու արագ նորացվող,
- Սննդամթերքի որոշ տեսակներ կարող են ներառվել պարենային զամբյուղում նույնիսկ, եթե նրանց սպառման ծավալն ու արժեքը շատ բարձր չէ, սակայն դրանք բնակչության սննդակարգի ու առողջության տեսանկյունից կարևոր դեր ունեն,
- Որոշ սննդատեսակներ կներառվեն նույնիսկ փոքր քանակությամբ, եթե դրանք ավանդաբար սպառվողներից են:

Փորձ է արվել պատասխանել այն հարցին, թե ո՞ր սննդատեսակներն ու խմիչքներն են ներառվելու նվազագույն պարենային զամբյուղում:

Հայաստանում ՏՏԿԱՀ-ն տեղեկատվություն է հավաքագրում 208 առավել կարևոր սննդատեսակների և ոչ ալկոհոլային խմիչքների գների վերաբերյալ: Իրականացվել է զգայունության վերլուծություն, որպեսզի հստակեցվի, թե ինչպես կփոխվի նվազագույն պարենային զամբյուղի արժեքը, եթե օգտագործվի 208 սննդատեսակներից որոշակի ենթախումբ՝ պահպանելով զամբյուղի կալորիականության արժեքը՝ 2 232 կկալ/օր:

Վերլուծությունը ցույց տվեց, որ եթե դուրս թողնենք «ոչ կարևոր» սննդատեսակները, որոնք ընդհանուր առմամբ կազմում են սննդամթերքի սպառման ընդհանուր ծախսերի միայն 1%, ապա ՏՏԿԱՀ-ի 208 սննդատեսակների ցանկը կարելի է կիսով չափ կրճատել: Եթե, օրինակ, նայելու լինենք բազիսային բնակչության (2-4-րդ դեցիլներ) սպառման օրինաչափություններին, կտեսնենք, որ այս խմբում սպառված սննդատեսակների ցանկն ընդհանուր առմամբ կազմում է 200: Եթե այդ սննդատեսակներն ու ոչ ոգելից խմիչքները դասակարգենք ըստ սպառման արժեքի նվազման և ցանկում թողնենք միայն այն

սննդատեսակները, որոնք կազմում են բազիսային բնակչության ընդհանուր սպառման 99%-ը, ապա կտեսնենք, որ սննդամթերքի ցանկում կարելի է թողնել միայն 106 սննդատեսակ: Դա մի փոքր ավելի է, քան նախնական ցանկի կեսը: Հետևաբար, սննդատեսակների մոտավորապես կեսից կարելի է հրաժարվել, քանի որ, դա տնային տնտեսության կողմից սննդի հետ կապված ծախսերի վրա էականորեն չի ազդում:

Ավելին, պարենային զամբյուղի արժեքը հիմնված լինելով ավելի փոքրաթիվ սննդատեսակների վրա բավականին կայուն է: Օրինակ՝ աղքատության պարենային գիծը, որը հիմնված է, բազիսային բնակչության (2-4-րդ դեցիլային խմբերում) նվազագույն պարենային զամբյուղի արժեքի վրա, օրական մեկ շնչի հաշվով կազմել է 518 դրամ, ընդ որում դիտարկվել է 200 սննդատեսակ: Եթե հրաժարվենք 94 ոչ կարևոր սննդատեսակներից և հիմնվենք ավելի փոքրաթիվ սննդատեսակների վրա, վերահաշվարկված աղքատության պարենային գիծը կկազմի օրական 516 դրամ: Հետևաբար, տարբերությունն էական չէ: Հաշվի առնելով վերոնշյալը, որոշում է կայացվել աղքատության պարենային գիծը հաշվարկել հիմնվելով այն սննդատեսակների վրա, որոնք միասին կազմում են հիմնական սննդամթերքի սպառման 99%-ը: Ոչ կարևոր սննդատեսակների առանձնացումը թույլ է տալիս խուսափել գնման ցածր հաճախականություն ունեցողներից: Նման սննդատեսակները կարող են գնահատման ավելի մեծ սխալ ունենալ, թե սպառման քանակի, թե գնի տեսանկյունից:

Ոչ պարենային ծախսերի գնահատումը

Բնակչությունը պետք է կարողանա հոգալ ոչ միայն իր նվազագույն պարենային պահանջը, այլև նվազագույն ոչ պարենային ապրանքների պահանջը: Ելնելով վերոնշյալից՝ հարկավոր է ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների մասնաբաժինն ավելացնել նվազագույն պարենային զամբյուղում: Սահմանելով աղքատության պարենային գիծը, հարց է առաջանում, թե ինչպե՞ս գնահատել ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը՝ ստանալ ընդհանուր աղքատության գիծը, որը ներառում է երկու՝ թե պարենային, թե ոչ պարենային ծախսերի մասնաբաժինը: Առկա են մի քանի գնահատման մեթոդներ, որոնք տեխնիկական տեսանկյունից առանձին-առանձին ունեն իրենց առավելությունները:

Այս զեկույցում փաստացի սպառման հիման վրա ոչ պարենային սպառման մասնաբաժնի սահմանման երկու պարզ և թափանցիկ մեթոդ է կիրառվել: Ընդհանուր աղքատության գծի ոչ պարենային մասնաբաժինը գնահատվել է պարենային ծախսերի մեթոդի (ՊՕՄ) և սպառողական զամբյուղի մեթոդի (ՍՁՄ) կիրառմամբ (Համաշխարհային բանկ, 2002): Գնահատումը չի ներառում ռեգրեսիոն մոտեցումներ, քանի որ դրանք հասկանալի չեն քաղաքականությունն իրականացնողների ու ոչ մասնագետների համար:

Համաձայն ՊՕՄ-ի, նախ և առաջ ընտրվել են այն անձինք, ում պարենային սպառումը մոտ է աղքատության պարենային գծին: Ահա այս խումբն էլ հանդիսանում է այն հենքը, որի հիման վրա հաշվարկվում է ոչ պարենային մասնաբաժինն ու համընդհանուր աղքատության գիծը: Այս խմբի համար հաշվարկվում է սպառման այն մասնաբաժինը, որը հատկացվում է ոչ պարենային սպառման ապրանքներին: Այս մասնաբաժնի արժեքը ոչ պարենային սպառման արժեքն է, որն ավելացվում է աղքատության պարենային գծի արժեքին, ստանալու համար աղքատության ընդհանուր գիծը: Այդ մասնաբաժինը կարող է էլ ավելի տրոհվել՝ առանձնացնելով ոչ պարենային ապրանքների և ծառայությունների արժեքը: Ավելի ճշգրիտ, պարենային մասնաբաժինը հաշվարկվում է որպես այն տնային տնտեսությունների պարենային մասնաբաժինների «համընդհանուր միջին», որոնց մեկ չափահասի հաշվով պարենային սպառումն ընկած է աղքատության պարենային գծի (ոչ պարամետրային գնահատական) $\pm 2-10\%$ միջակայքում:

Երկրորդ մեթոդաբանության համաձայն, ըստ ՍՁՄ-ի, պարենային մասնաբաժինը հաշվարկվում է որպես այն տնային տնտեսությունների պարենային միջին մասնաբաժինների «համընդհանուր միջին», որտեղ մեկ չափահասի հաշվով ընդհանուր սպառումն ընկած է աղքատության պարենային գծի $\pm 2-10\%$ միջակայքում:

Սա հանգեցնում է աղքատության երկու գծերի գնահատման՝ ստորին և վերին: Աղքատության այն գիծը, որը ներառում է ոչ պարենային մասնաբաժինը համաձայն ՊՕՄ-ի, կոչվում է աղքատության վերին գիծ, իսկ աղքատության այն գիծը, որն ըստ ՍԶՄ-ի ներառում է ոչ սննդային մասնաբաժինը, կոչվում է աղքատության ստորին գիծ:


Աղքատության գծերի գնահատման համառոտ նկարագրությունը

Առաջարկվող աղքատության գծի արժեքը 2009թ.-ի համար գնահատվել էր 17 483 դրամ մեկ ամսվա համար մեկ չափահաս անձի հաշվով: Սակայն, կարող ենք ասել, որ ամսական մեկ չափահասին բաժին ընկնող գումարը՝ **17 000 – 20 000 դրամ** կարող է ծառայել որպես աղքատության պարենային գիծ, հիմնված տարբեր բազիսային բնակչության ու պարենային տարբեր զամբյուղների կառուցվածքի վրա:

Պարենային գիծը, նախ և առաջ, հաշվարկվում է մեկ շնչի հաշվով՝ հիմնվելով մեկ օրվա համար մեկ շնչի համար սահմանված կալորիականության՝ 2 232 կկալ արժեքի վրա, ապա ճշգրտվում է 1.113 համարժեքության սանդղակի գործակցով, որը 2004 թվականին հաշվարկվել էր ՀԲ-ի կողմից: Համադրելիության նպատակով գործածվել են միևնույն սանդղակային գործակիցները, մեկ չափահաս անձին համարժեք չափով աղքատության գիծը վերահաշվարկելու համար, ինչպես որ, դա արվել էր 2004 թվականին: Գծապատկեր 2-ը ցույց է տալիս աղքատության պարենային գծի բաղադրիչները՝ համապատասխան «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգիչ» երկնիշխմբերի:

Գծապատկեր 2. Աղքատության պարենային գծի բաղադրիչները

(տոկոսներով)




Աղքատության պարենային գիծն այն **նվազագույն պարենային զամբյուղի** արժեքն է, որը՝

- բաղկացած է 106 հիմնական սննդատեսակից և ոչ ալկոհոլային խմիչքներից,
- ունի 2 232 կկալ օրական մեկ շնչի հաշվով էներգետիկ արժեք,
- հիմնված է չափահասին համարժեք սպառման 2-4-րդ դեցիլների սպառման համամասնությունների վրա:

Աղքատության ստորին գիծը

Սպառողական զամբյուղի մեթոդը, հաշվարկում է ընդհանուր սպառման մեջ պարենային սպառման մասնաբաժինը այն տնային տնտեսությունների համար, որոնց ընդհանուր սպառումը գտնվում է աղքատության պարենային գծի շրջակայքում և կազմում է մոտավորապես 70 տոկոս: Ավելացնելով համապատասխան ոչ պարենային մասնաբաժինը՝ ստանում ենք աղքատության ստորին գիծը: Առաջարկվող աղքատության ստորին գիծը 2009թ.-ի համար կազմում է ամսական **25 217 դրամ** մեկ չափահասի հաշվով: Մեկ չափահասի հաշվով ամսական **24 000–28 000 դրամ** արժեքը կարող է ծառայել որպես աղքատության ստորին գիծ՝ հիմնվելով տարբեր բազիսային բնակչության ու պարենային տարբեր զամբյուղների կառուցվածքի վրա:

Գծապատկեր 3. Աղքատության ստորին գծի կառուցվածքը




Աղքատության վերին գիծը

Միևնույն ժամանակ, պարենային ծախսերի մեթոդը հաշվարկում է ընդհանուր սպառման մեջ պարենային սպառման մասնաբաժինը, հիմնվելով այն տնային տնտեսությունների վրա, որոնց ընդհանուր սպառումը գտնվում է աղքատության պարենային գծի շրջակայքում և կազմում է մոտավորապես **56.5 %**:

Համաձայն վերոնշյալ հաշվարկների՝ աղքատության ընդհանուր գիծը 2009թ.-ի համար կազմում է **30 920 դրամ** ամսական մեկ չափահաս անձին համարժեք չափով: Մեկ չափահասի հաշվով ամսական **29 000–36 000 դրամ** արժեքը կարող է ծառայել որպես աղքատության վերին գիծ՝ հիմնվելով տարբեր բազիսային բնակչության ու պարենային տարբեր զամբյուղների կառուցվածքի վրա:

Գծապատկեր 4. Աղքատության վերին գծի կառուցվածքը



Աղյուսակ 2-ը ներկայացնում է Հայաստանում աղքատության գծերը, որոնք արտահայտված են 2009 թվականի տարեկան միջին գներով:

Աղյուսակ 2. Աղքատության գծերը մեկ չափահասին համարժեք դրամ/ամիս արտահայտմամբ, 2009թ.

Աղքատության պարենային գիծը	17 483
Աղքատության ստորին գիծը	25 217
Աղքատության վերին գիծը	30 920

Վերոնշյալ աղքատության գծերը ենթադրաբար պետք է ավելի լավ արտացոլեն իրականությունը Հայաստանում և բնակչության սպառման ու ծախսերի օրինաչափությունները: Սակայն, հաշվի առնելով սպառման հնարավոր թերագնահատումը, որը կարող է արտացոլված լինել ՏՏԿԱՀ տվյալներում, անհրաժեշտություն է առաջացնում վերանայել աղքատության գիծը՝ հիմնվելով ժողովրդագրական մեկ այլ խմբի բնակչության վրա: Ամեն դեպքում ՏՏԿԱՀ-ով փաստագրված աղքատության գիծը չպետք է շփոթել աղքատության նորմատիվային գծի հետ, որը մշակվում է ոչ թե վիճակագրական, այլ վարչարարական նպատակներով՝ ըստ առողջապահական և սոցիալական նվազագույն նորմատիվային պահանջների:

2015թ.-ի աղքատության գնահատման մեթոդիկա

2015թ.-ի աղքատությունը գնահատելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերահաշվարկել 2014թ.-ի աղքատության գծերը՝ աղքատության պարենային գիծը, ստորին և վերին աղքատության ընդհանուր գծերը: Պետք է նշել որ աղքատության գնահատման երեք բաղադրիչներից մնացած երկուսի՝ այն է սպառման ագրեգատի և աղքատության ցուցանիշների հաշվարկը մնում է անփոփոխ:

2015թ.-ի պարենային գծի վերահաշվարկը կատարվել է հետևյալ կերպ՝ 2014թ. նվազագույն պարենային զամբյուղի դրամական արժեքը ինդեքսավորվել է սպառողական պարենային ինդեքսի միջոցով, որը կազմել է 3.1%: Իսկ աղքատության ոչ պարենային

բաղադրիչը ստորին և վերին աղքատության գծերում ինդեքսավորվել է սպառողական ոչ պարենային ինդեքսի միջոցով, որը կազմել է 4.2 %:

3. Աղքատության հիմնական ցուցանիշները

Այս զեկույցում, հետևելով միջազգային պրակտիկային, աղքատությունը գնահատվել է ըստ աղքատության մակարդակի, աղքատության խորության և սրության ցուցանիշների: Աղքատության մակարդակի ամենապարզ և առավել հաճախ կիրառվող գնահատականը դա աղքատների ընդհանուր թվաքանակի համաթիվն է, որը պարզապես, իրենից ներկայացնում է մեկ չափահաս անդամի հաշվով համարժեք սպառման մակարդակով աղքատության գծից ցած գտնվող անհատների հարաբերություն (Ֆոստեր և ուրիշներ 1984թ.): Աղքատության խորության համաթիվը ցույց է տալիս, թե որքանով են այդ մարդիկ աղքատ կամ որքան է նրանց սպառումը ցածր աղքատության գծից: Աղքատության սրության ցուցանիշը կիրառվել է գնահատելու աղքատների միջև եղած սպառման անհավասարությունը (որոշ աղքատների մոտ սպառումը կարող է շատ մոտ գտնվել աղքատության գծին, իսկ ոմանք սպառման ցուցանիշով կարող են շատ ցած գտնվել աղքատության գծից): Զեկույցում կիրառված աղքատության ցուցանիշները նկարագրված են հետևյալ բանաձևով.

$$P(\alpha) = \frac{1}{n} \sum_{i=1}^n \left[\max \left(\frac{z - c_i}{z}, 0 \right) \right]^\alpha$$

որտեղ α -ն պարամետր է (նկարագրված է ստորև), z -ը աղքատության գիծն է, c_i -ն i -րդ անհատի սպառումն է, իսկ n -ն անհատների ընդհանուր թվաքանակը: Եթե α -ն հավասար է զրոյի, ստացվում է $P(0)$, կամ աղքատության մակարդակի համաթիվը, որը գնահատում է աղքատության գծից ներքև գտնվող անհատների հարաբերությունը: Եթե α -ն հավասար է 1-ի, ստացվում է $P(1)$, կամ աղքատության խորությունը, որը հաշվի է առնում, թե որքան են միջին հաշվով աղքատները հեռու այդ գծից: $P(1)$ -ը կարող է արտահայտվել հետևյալ բանաձևով.

$$P(1) = P(0) * (\text{Average Deficit}),$$

որտեղ միջին պակասուրդը հաշվարկվում է որպես տոկոս աղքատության գծի նկատմամբ, որի չափով աղքատների սպառումը միջին հաշվով պակաս է աղքատության գծից: Վերջապես, եթե α -ն հավասար է 2, ստացվում է $P(2)$, կամ աղքատության սրությունը, որը հաշվի է առնում աղքատների միջև անհավասարությունը:

Սույն զեկույցում ընդհանուր աղքատության միտումները նկարագրված են աղքատության բոլոր երեք գնահատականների միջոցով, սակայն աղքատության պատկերի վերլուծությունները հիմնականում կատարվել են աղքատության մակարդակի գնահատականի հիման վրա: